Չարաշահումների բազմաթիւ տեսակներ գոյութիւն ունեն. Չարաշահումը կարող է լինել ֆիզիքական այն դէպքում՝ երբ մէկը վնաս է հասցնում ձեր մարմնին: Չարաշահումը կարող է լինել նաեւ բանաւոր խօսքի կամ զգացումների վրայ ազդելու միջոցով՝ սպառնալիքները եւ կոպիտ խօսակցութիւնը նոյնպէս չարաշահում են համարւում.

Ոչ ոք, ոչ նոյնիսկ ընտանիքի անդամները, իրաւունք ունեն կոպտութիւն կամ չարաշահութիւն գործադրել:

Ստորեւ մի շարք իրողութիւններ մանկան չարաշահումների եւ նրանց նկատմամբ կոպիտ վերաբերմունքների մասին, որոնց մասին հարկ է ծանօթութիւն ունենալ.

- Մանկան չարաշահումների մեծ մասը կատարւում է ընտանիքի անդամների միջոցով
- Մանուկները նեղւում են երբ տան մէջ որեւէ մէկը չարաշահման է ենթարկւում

FIRST 5 CALIFORNIA

մանկան չարաշահումներից խուսափելու ճանապարհներ

Դուք կարող էք ունենալ ապահով մի տուն

Ձեր ընտանիքին պաշտպանէք չարաշահումներից

Եթէ չարաշահման դէպքեր են պատահում ձեր տան մէջ, մի' թագցրէք. խօսէ'ք որեւէ մէկի հետ. Օգնութիւն խնդրէք:

Այն մանուկները որոնք ենթարկւում են չարաշահման կամ կոպիտ վերաբերմունքի, դպրոցում դժւարութիւն են ունենում.

մեծ հաւանականութեամբ, նրանք իրենց կը պահեն թախծոտ եւ մտահոգ:

Ուշադիր եղէք այս նշանների նկակտմամբ. դրանք կարող են մանկան չարաշահումների նշաններ լինել.

Մանուկները որոնք չարաշահման են ենթարկւած որոշ դէպքերում կարող է՝

- Կրեն քերծւածքներ կամ նշաններ որոնք անբացատրելի են.
- Քնելու դժւարութիւն ունենան
- Ունենան ցաւեր, ուռուցքներ կամ արիւն՝ իրենց բերանում կամ սեռային անդամների վրայ, որոնք անբացատրելի են.

Չարաշահման ենթարկւած մանուկները նաեւ կարող է՝

- Ունենան առանց պատճառի խիստ վախի, տխրութեան կամ քաշւածութեան զգացում.
- Ուրիշների նկակտմամբ դրսեւորեն չարաշահման կամ ստոր վերաբերմունք.
- Ընդօրինակեն մեծահասակների կողմից դրսեւորւող սեռային արարքներ.

Դադարեն հետաքրքրութիւն ցոյց տալ դպրոցի կամ այլ բաների նկակտմամբ որոնց նախապէս սիրում էին.

Ի՞նչ պիտի անել եթէ կասկածում էք որ ձեր երեխան չարաշահման է ենթարկւել

- Սովորեցրէք ձեր երեխաներին պատմել ձեզ իրենց հետ պատահած որեւէ վատ դէպքի մասին
- Անմիջապէս խորհուրդներ առէք
- Դուք կարող էք հեռախօսել տագնապի հեռախօսահամահարներին որոնք տրւած են այս թերթիկի միւս երեսում, օգնութիւն եւ խորհուրդ ստանալու համար

Եթէ դուք գտնւում էք անապահով վայրում, ձեզ եւ ձեր երեխաներին պաշտպանէք

- Խօսէք ձեր վստահած մի անձի հետ. օգնութիւն ստացէք այդ վայրից հեռանալու համար
- Գտէք ապահով մի վայր ձեր երեխաների հետ այնտեղ մնալու համար
- Եթէ վախեցած էք, արդէն կարող էք խօսել այդ մասին ոստիկանութեան հետ
- Տագնապի հեռախօսահամահարները միշտ պահէք ձեր հեռախօսին մօտ մի տեղ

Եթէ անհրաժեշտ է որ շտապ մեկնէք տնից, ունեցէք կազմած մի ծրագիր. մէկ կողմ դրէք՝

- Յաւելեալ հագուստներ ձեր եւ ձեր երեխաների համար
- Որոշ գումարի դրամ
- Ձեր անձնագիրը եւ այլ կարեւոր փաստաթղթեր

Եթէ դուք վտանգի տակ էք եւ կամ վիրաւորւած էք.

911

- Գնացէք ապահով մի վայր. դա կարող է լինել մի ընկերոջ տուն եւ կամ մօտակայ մի վաճառանոց.
- Հեռախօսէք 9-1-1 համարով, կամ խնդրէք մի ուրիշից հեռախօսել նոյն համարով
- Ստացէք ձեզ անհրաժեշտ բժշկական խնամք
- Մի ապաստարան պահանջէք եթէ մնալու համար տեղի պէտք ունէք

FIRST 5 CALIFORNIA

ներքին/ընտանեկան կոպտութիւններից խուսափելու ճանապարհներ

Դուք կարող էք ունենալ ապահով տուն

Պաշտպանէք ձեր ընտանիքը չարաշահումներից

Եթէ չարաշահման դէպքեր են պատահում ձեր տան մէջ, մի' թագցրէք. խօսէ'ք որեւէ մէկի հետ. Օգնութիւն խնդրէք:

Ուղղութիւններ չարաշահումներից զերծ ապրելու համար՝

- Խօսէք ձեր երեխաների հետ եւ նրանց հետ յարգանքով եղէք
- Ծանօթութիւն հաստատէք ձեր հարեւանների հետ

Եթէ ներկայիս ենթակայ էք չարաշահումների՝ դիմէք ձեզ անհրաժեշտ օգնութիւն ստանալու համար. Անպատեհ է որ օգնութեան դիմէք

Ոստիկանութիւնից հետաքրքրւէք՝ տեղեկանալու համար յանցագործութիւններին վերահսկող ծրագրերի մասին

Օգնութիւն ուզելու դէպքում դիմէք հետեւեալ կենտրոններին՝

Toll-free Child Abuse Hotline
(voice) 1-800-422-4453

(Մանկան Չարաշահումների

օգնութեան ձրի հեռախօսահամար)
(TTY) 1-800-222-4453

Toll-free National Domestic Violence Hotline
(voice) 1-800-799-7233

(Ազգային Ներքին Կոպտութիւնների համար

Օգնութեան Ձրի Հեռախօսահամար)
(TTY) 1-800-787-3224

National Crime Prevention Council

www.ncpc.org

©2003 First 5 California

Domes Viol Tips Armenian C279-10/03